



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՀՀ ԲՆԱԾԱՎԱՅՐԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Handwritten signature



Ա. ՄՆԱՍՅԱՆ

«02» 02 2018թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 05

Ձեռնարկողը՝

«ՄԼ Մայնինգ» ՍՊԸ
Ք. Երևան, Շիրակի 74/16

Գործունեությունը՝

«Արագածոտնի մարզի Ոսկեհալի բազալիտի հանքավայրի հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ»

«Արմավիրի մարզ»

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Handwritten signature

Վ. Սահակյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 05

<<02>> 02 2018թ.

<< Արագածոտնի մարզի Ոսկեհատի բազալտի հանքավայրի հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	<<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	<< Արմավիրի մարզ, Աղավնատուն համայնք

<<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ կողմից << Արագածոտնի մարզի Ոսկեհատի բազալտի հանքավայրի հարավային տեղամասի սահմաններում օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով՝ 2018-2020 թ.թ նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Հարավային տեղամասը տեղակայված է Աղավնատուն համայնքի վարչական սահմաններում՝ համայնքից 1.8կմ դեպի հարավ-արևմուտք ուղղությամբ: Տեղամասը Երևան և Աշտարակ քաղաքների և հարևանությամբ գտնվող գյուղերի հետ կապված է ասֆալտապատ ճանապարհներով: Երևակումը գտնվում է փոքր սարահարթի սահմաններում, զբաղեցնում է մոտ 3.32 հա տարածք: Մորֆոլոգիական տեսակետից տեղամասն իրենից ներկայացնում է ցածր բլրային տարածք և տեղադրված է՝ 995-ից մինչև 1025մ բացարձակ բարձրությունների վրա: Տրամադրվող տեղամասի աշխարհագրական կորրդինատներն են՝ հյուսիսային լայնության՝ 40°15'51", արևելյան երկայնության՝ 44°15'59":

Տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդական հասակի հրաբխային և նստվածքային ծագման ապարները, որոնք ներկայացված են հրաբխային տուֆերով, բազալտներով և հնագույն տերրասաների ջարդոնային առաջացումներով: Երևակման տարածքում սողանքային երևույթներ չեն դիտարկվել, մակերևութային և ստորերկրյա ջրային հորիզոնները բացակայում են: Տեղամասը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում, զուրկ է բուսական ծածկույթից:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նպատակն է պարզաբանել ապարների համապատասխանությունը 100-95 ՀՍ ԳՈՍ-ի պահանջներին, իսկ թափոնները՝ 8667-95 «Խիճ և կոպիճ շինարարական աշխատանքների համար» ՀՍ ԳՈՍ-երի տեխնիկական պահանջներին համապատասխան: Երկրաբանատնտեսական աշխատանքների արդյունքներով նախատեսվում է կազմել երկրաբանական աշխատանքային հարցումները՝ Ա արդյունաբերական կարգով պաշարների հաշվարկմամբ և տեխնիկատնտեսական հիմնավորմամբ:

Նախագծով նախատեսվում են 1:1000 մասշտաբի երկրաբանահանույթային աշխատանքներ, հորատանցքերի հորատում, նմուշարկում, փորձնական հանույթ



ռադիոմետրական և ինժեներա-հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ և դիտարկումներ՝ ստորերկրյա ջրերի, սողանքների և այլ գետոհնամիկ երևույթների առկայությունը պարզաբանելու համար: Փորձնական բացահանքում լեռնային զանգվածից կորոշվի կոնդիցիոն հումքի ելքը, կկատարվի արդյունահանված բլոկների սղոցում: Հետախուզումը նախատեսվում է իրականացնել հորատանցքերի միջոցով՝ ջրով, առանց կավային լուծույթի օգտագործման: Աշխատանքների ընթացքում չի օգտագործվելու պայթուցիկ նյութեր: Քանի որ տեղամասում ճանապարհները բարենպաստ են, ուստի ճանապարհների նորոգում և կառուցում չի նախատեսվում:

<<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊ ընկերությունը Ոսկեհատի բազալտի հանքավայրի հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության նպատակով նախատեսում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- տոպոհանույթ և երկրաբանական հանույթ՝ 9.15 հա տարածքում,
- 6 հորատանցքերի հորատում՝ 120 գծ.մ. ընդհանուր ծավալով,
- բնական մերկացումների, հորատհանուկի նմուշարկում,
- 300մ³ փորձնական հանույթի իրականացում /10 գծ.մ/,
- նմուշների լաբորատոր հետազոտություն,
- հետախուզված պաշարների արդյունաբերական նշանակության գնահատում,
- աշխատանքների ավարտից հետո խախտված տարածքների ռեկուլտիվացիա:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, բնական մերկացումներն ու բացահանքը: Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով, որոնց աշխատանքների ծավալներն ըստ տեսակների հետևյալն են. հորատահանուկի փաստագրում՝ 120գծ.մ, փորձնական բացահանք՝ 10գծ.մ: Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի հարթ ռելիեֆը, հորատման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է 252 խմ ծավալով 6 հատ հորատման հրապարակների շինարարություն և դրանց մոտեցման ճանապարհների կառուցում մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում: Հորատումն իրականացվելու է ինքնագնաց հաստոցով: Հորատանցքերի միջին խորությունը ընդունվում է 20մ: Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային ուղղաձիգ հորատանցքերի հորատման միջոցով, կարծր համաձուլվածքային՝ 132-112 մմ տրամագծով թագիկներով:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բացահանքից և բնական մերկացումներից: Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը կկազմի մինչև 5մ, հանուկային նմուշների ընդհանուր քանակը 29: Փորձնական քարահանքից վերցվելու է մենաքարային չափի (20x20x20սմ չափսերի) 1 նմուշ՝ նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ՝ օգտակար հանածոյի ռադիացիոն – հիգիենիկ հատկությունների որոշման նպատակով: Լաբորատոր հետազոտման կենթարկվի մեկ համախառն նմուշ՝ խճի ուսումնասիրման համար: Լեռնային զանգվածից պիտանի բլոկների ելքի տոկոսի որոշման համար նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում՝ 300մ³ ծավալով, փորձնական հանույթի ընդհանուր ծավալը կկազմի 200մ³: Այն պետք է կատարվի առանց պայթեցման աշխատանքների՝ 4 – րդ կարգի ապարներում՝ պարզելու համար՝ 1մ³ - ից սալիկի ստացման ելքը: Տեղամասի շահագործման ժամանակ ստացված թափոնների օգտագործելու հնարավորությունները որպես խիճ պարզելու համար, անհրաժեշտ է 2 համախառն նմուշի վերցնում՝ 300 կգ ընդհանուր քաշով:

Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումներ նախատեսվում են կատարել համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում: Երկրաբանահետախուզական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ՝ հետախուզական փորվածքների և հորատանցքերի անցման ընթացքում:

Նախնական գնահատման հայտում ներկայացվել է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, ջուր, հող, կենսաբազմազանություն/ պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները, այդ թվում՝

- հանքերևակման տարածքներում և ավտոճանապարհների մակերեսներին մթնոլորտային օդի որակի և հողի որակի պարբերաբար դիտարկումներ,

- Փոշեգոյացման կանխման նպատակով արտադրական գոտիներում (փորձնական հանույթի բացահանքի սահմաններում) ջրցանում:

- Կիրառվող հանքային տեխնիկայի և սարքավորումների տեխնիկական վիճակի կարգավորում, արտանետման խողովակի վրա զտիչների տեղադրում /ծխագազերի գերնորմատիվային արտանետումները կանխելու նպատակով/:

Ուսումնասիրության աշխատանքների ընթացքում չի նախատեսվում քիմիկատների օգտագործում և վտանգավոր արտահոսքեր չեն առաջանա, անձրևաջրերը և ձյան հոսքերը տարածքից կհեռանան բնական առվակների միջոցով: Տեխնիկական նպատակով ջրօգտագործումը կիրականացվի ջրատար մեքենայով, իսկ որպես խմելու ջուր նախատեսվում է օգտագործել շշալցրած ջրերը:

Ռեկուլտիվացիոն աշխատանքները նախատեսվում է իրականացնել հետախուզական աշխատանքների ավարտից հետո: Ռեկուլտիվացիայի ենթակա բուսաշերտի ծավալը, որը հաշվարկվել է հորատման հրապարակների, հետախուզահորերի տարածքների մակերեսից, ընդհանուր կազմում է 252 մ² /որտեղ հողաբուսաշերտ առկա է 45 տոկոս մակերեսում և ծավալը կազմում է 34մ³/: Հողաբուսական շերտի պահպանության նպատակով նախատեսվում է հորատման հարթակների և փորձնական հանույթի բացահանքի անցման ժամանակ տարածքում առկա հողի վերին շերտը հանել և պահեստավորել, երկրաբանահետախուզական աշխատանքների ավարտից հետո այն օգտագործել հորատահարթակների ռեկուլտիվացիոն աշխատանքների և բնական լանդշաֆտի վերականգնման համար: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար <<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ընկերության կողմից՝ որպես դրամագրույթ նախատեսվում է հատկացնել 226800 (երկու հարյուր քսան վեց հազար) ՀՀ դրամ: Աշխատանքները կատարվելու են ձեռքով: Քանի որ տեղամասում փորձնական բացահանքն ամբողջապես մերկացած է, ապա այստեղ մակաբացման ապարների հեռացում չի նախատեսվում և լրացուցիչ ծախսեր չեն պահանջվում: Երկրաբանահետախուզական աշխատանքների ժամանակ ժամանակավոր օգտագործվող հողերի ընդհանուր մակերեսը կկազմի 0.025հա, որի վնասի համար համայնքին փոխհատուցվող գումարը գնահատվել է 8750 դրամ:

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում ընկերությունը շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրի բաղադրիչների /օդ, ջուր, հող/ որակի վերահսկողության համար նախատեսում է մշտադիտարկումներ, որոնց գործողությունների ծախսերը նախնական գնահատվել են 250 հազար դրամ:

Նախնական գնահատման հայտի փորձաքննության փուլում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով 25.01.2018թ. ՀՀ Արմավիրի մարզի Աղավնատուն համայնքում իրականացվել է հանրային քննարկումներ: Քննարկումների ընթացքում ծրագրի իրականացումը հանրության կողմից արժանացել է հավանության այն նկատառումներով, որ հետագայում հանքավայրի շահագործումը որոշակիորեն կարող է նպաստել համայնքի, կամ բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ ստեղծելով լրացուցիչ աշխատանքային ռեսուրսներ:

Եզրահանգում. Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում աշխատանքների ոչ մեծ ծավալների պատճառով շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կլինեն ոչ զգալի, կկրեն ժամանակավոր և տեղային բնույթ: Հայտում ներկայացված բնապահպանական միջոցառումների ապահովման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, ինչպես նաև հողային ռեսուրսների վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:



Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում անհրաժեշտ է՝
 - պարբերաբար իրականացնել մշտադիտարկման (մոնիտորինգի) պլանում ներառված հողի, ջրի, օդի որակի վերահսկման միջոցառումներ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները կանխարգելելու նպատակով:
 - ջրօգտագործումը, առաջացած տարբեր տեսակի թափոնների հեռացումն ու տեղադրումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<ՄԼ ՄԱՅՆԻՆԳ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Արագածոտնի մարզի Ոսկեհատի բազալտի հանքավայրի հարավային տեղամասում երկրաբանական ուսումնասիրության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



[Handwritten signature]

Հ. Մկրտչյան